ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 17

«Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ - Հայաստան» ՊՈԱԿ-ի
Կառավարման խորհրդի 2007թ. հուլիսի 25-ին ժամը 15:00-ին
կայացած հերթական նիստի

Նիստը նախագահում էր.

«Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ - Հայաստան» ՊՈԱԿ-ի Կառավարման խորհրդի նախագահ, ՀՀ Վարչապետ Սերժ Սարգսյանը

Մասնակցում էին՝

Կառավարման խորհրդի անդամներ.

Վարդան Խաչատրյանը	ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարար
Դավիթ Լոքյանը	ՀՀ գյուղատնտեսության նախարար
Հրանդ Բեգլարյանը	ՀՀ տրանսպորտի և կապի նախարարի առաջին տեղակալ /նախարար Անդրանիկ Մանուկյանի փոխարեն/
Նազելի Վարդանյանը	«Հայաստանի անտառներ» բնապահպանական ՀԿ-ի նախագահ
Տոնական Ղազարյանը	«Շենիկ» Զրօգտագործողների ընկերությունների միության նախագահ
Վանիկ Սողոմոնյանը	Ֆերմերների ազգային միավորում ՀԿ-ի նախագահ
Վարդան Համբարձումյանը	«Գյուղատնտեսական ասոցիացիաների ֆեդերացիա» իրավաբանական անձանց միության նախագահ

Նիստից բացակայում էին.

Վահրամ Ներսիսյանցը	ՀՀ Նախագահի տնտեսական հարցերով գլխավոր խորհրդական
Հովիկ Աբրահամյանը	ՀՀ տարածքային կառավարման նախարար, ՀՀ Փոխվարչապետ
Կարեն Նազարյանը	«Հայաստանի միջեկեղեցական բարեգործական կլոր սեղան» հիմնադրամի նախագահ

Նիստին հրավիրված էին.

Անդրանիկ Անդրեասյանը	ՀՀ տարածքային կառավարման նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեի նախագահ

Դավիթ Ավետիսյանը	ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի տեղակալ

Նիստին մասնակցում էին նաև.

Արա Հովսեփյանը	«Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ - Հայաստան» ՊՈԱԿ-ի գլխավոր գործադիր տնօրեն
Ռուդոլֆ Պետրոսյանը	«Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ - Հայաստան» ՊՈԱԿ-ի գնումների ղեկավար
Ալեքս Ռասինը	Կառավարման Խորհրդի դիտորդ, Հայաստանում ԱՄՆ «Հազարամյակի մարտահրավեր» կորպորացիայի գրասենյակի տնօրեն
Գայանե Հարությունյանը	Հայաստանում ԱՄՆ «Հազարամյակի մարտահրավեր» կորպորացիայի գրասենյակի օգնական
Սիմոն Ղոնաղչյանը	ՀՀ կառավարության աշխատակազմի տնտեսագիտական վարչության պետ
Մերի Հարությունյանը	ՀՀ կառավարության աշխատակազմի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի վարչության պետ

Նիստի օրակարգում ընդգրկված էին հետևյալ հարցերը.

1. «Ոռոգվող գյուղատնտեսություն» ենթածրագրի «Ենթակառուցվածքներ» բաղադրիչի «Ոռոգման 6 ինքնահոս համակարգերի նախագծում և շինարարության վերահսկում» խորհրդատվական ծառայությունների ձեռք բերման տեխնիկական առաջարկների վերագնահատման արդյունքների քննարկում և հաստատում:
2. «Ոռոգվող գյուղատնտեսություն» ենթածրագրի «Ենթակառուցվածքներ» բաղադրիչի «68 պոմպակայանների վերազինման ու արդյունավետության բարձրացման տեխնիկա-տնտեսական հիմնավորում» խորհրդատվական ծառայությունների ձեռք բերման տեխնիկական առաջարկների գնահատման արդյունքների քննարկում և հաստատում:
3. «Ոռոգվող գյուղատնտեսություն» ենթածրագրի «Ենթակառուցվածքներ» բաղադրիչի «Երրորդ կարգի ջրանցքների վերականգնման նախագծում և շինարարության վերահսկում» խորհրդատվական ծառայության մրցույթին մասնակցելու նպատակով շահագրգռվածության ցուցաբերման հրավերի քննարկում և հաստատում:
4. «Ոռոգվող գյուղատնտեսություն» ենթածրագրի «Ենթակառուցվածքներ» բաղադրիչի երրորդ կարգի ջրանցքների վերականգնման ենթաբաղադրիչի շրջանակներում «Արարատի մարզում տեղակայված Աբովյան, Արևշատ, Լանջազատ և Արմավիրի մարզում Գրիբոյեդով համայնքների երրորդ կարգի ջրանցքների վերականգնում» շինարարական աշխատանքների ձեռքբերման մրցութային փաթեթի և Մրցութային առաջարկներ ներկայացնելու հրավերի (ՄԱՆՀ) քննարկում և հաստատում:
5. «Գյուղական ճանապարհների վերականգնում» ենթածրագրի շրջանակներում «Ճանապարհների տեխնիկա-տնտեսական հիմնավորում և նախագծում» խորհրդատվական ծառայությունների մատուցման նպատակով «SWECO International AB» (Շվեդիա) ընկերության հետ կնքված պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կատարելու համաձայնագրի նախագծի քննարկում և հաստատում:

6. «Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ -Հայաստան» ՊՈԱԿ-ի Կառավարման խորհրդի կողմից ս.թ. մայիսի 15-ին հաստատված գնումների պլանի փոփոխությունների քննարկում և հաստատում:
7. Տեղեկատվություն «Գյուղական ճանապարհների վերականգնում» ենթածրագրի առաջին փաթեթում ընդգրկված ճանապարհների երթևեկելի մասերի լայնության փոփոխության վերաբերյալ «Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ - Հայաստան» ՊՈԱԿ-ի Կառավարման խորհրդի ս.թ. հունիսի 26-ի նիստի արձանագրության 7-րդ կետի ա/ ենթակետում նշված հանձնարարության կատարման մասին:
8. Այլ հարցեր.

   ա/ Հազարամյակի մարտահրավեր հիմնադրամ - Հայաստան ծրագրի «Բնապահպանական և սոցիալական գնահատում և վերահսկողություն» խորհրդատվական ծառայությունների ձեռք բերման մրցույթի գնահատման արդյունքների բողոքարկման պատասխանի քննարկում և հաստատում:

   բ/ Հազարամյակի մարտահրավեր հիմնադրամ - Հայաստան ծրագրի «Ֆինանսական գործակալի» խորհրդատվական ծառայությունների ձեռքբերման տեխնիկական առաջարկների գնահատման արդյունքների քննարկում և հաստատում:

   գ/ Հազարամյակի մարտահրավեր հիմնադրամ - Հայաստան ծրագրի Աուդիտի անցկացման առաջարկի ներկայացման հայտի քննարկում և հաստատում:

   դ/ Հազարամյակի մարտահրավեր հիմնադրամ - Հայաստան ծրագրի ֆինանսական հաշվետվողականության պլանում փոփոխությունների քննարկում և հաստատում:

   ե/ «Հազարամյակի մարտահրավեր - Հայաստան» հիմնադրամի «Գյուղական ճանապարհների վերականգնում» ենթածրագրի «Կատարման վրա հիմնված ավտոճանապարհների ընթացիկ և ձմեռային պահպանման գործող համակարգի վերանայում և բարելավում» խորհրդատվական ծառայությունների ձեռք բերման մրցույթի պայմանագրի քննարկում և հաստատում:

Նիստի ընթացքում.

Օրակարգի 1-ին հարցի վերաբերյալ <u>միաձայն</u> որոշվեց՝ հաստատել «Ոռոգվող գյուղատնտեսություն» ենթածրագրի «Ենթակառուցվածքներ» բաղադրիչի «Ոռոգման 6 ինքնահոս համակարգերի նախագծում և շինարարության վերահսկում» խորհրդատվական ծառայությունների ձեռք բերման տեխնիկական առաջարկների վերագնահատման արդյունքները:

Օրակարգի 2-րդ հարցի վերաբերյալ <u>միաձայն</u> որոշվեց՝ հաստատել «Ոռոգվող գյուղատնտեսություն» ենթածրագրի «Ենթակառուցվածքներ» բաղադրիչի «68 պոմպակայանների վերազինման ու արդյունավետության բարձրացման տեխնիկա-տնտեսական հիմնավորում» խորհրդատվական ծառայությունների ձեռք բերման տեխնիկական առաջարկների գնահատման արդյունքները:

Օրակարգի 3-րդ հարցի վերաբերյալ <u>միաձայն</u> որոշվեց՝ հաստատել «Ոռոգվող գյուղատնտեսություն» ենթածրագրի «Ենթակառուցվածքներ» բաղադրիչի «Երրորդ կարգի ջրանցքների վերականգնման նախագծում և շինարարության վերահսկում» խորհրդատվական ծառայության մրցույթին մասնակցելու նպատակով շահագրգռվածության ցուցաբերման հրավերը:

Օրակարգի 4-րդ հարցի վերաբերյալ <u>միաձայն</u> որոշվեց՝ հաստատել «Ոռոգվող գյուղատնտեսություն» ենթածրագրի «Ենթակառուցվածքներ» բաղադրիչի Երրորդ կարգի ջրանցքների վերականգնման ենթաբաղադրիչի շրջանակներում «Արարատի մարզում տեղակայված Աբովյան, Արևշատ, Լանջազատ և Արմավիրի մարզում Գրիբոյեդով համայնքների երրորդ կարգի ջրանցքների վերականգնում» շինարարական աշխատանքների ձեռքբերման մրցութային փաթեթը և Մրցութային առաջարկներ ներկայացնելու հրավերը (ՄԱՆՀ):

Օրակարգի 5-րդ հարցի վերաբերյալ որոշվեց (7 կողմ, մեկ՝ դեմ հարաբերակցությամբ)՝ հաստատել «Գյուղական ճանապարհների վերականգնում» ենթածրագրի շրջանակներում «Ճանապարհների տեխնիկա-տնտեսական հիմնավորում և նախագծում» խորհրդատվական ծառայությունների մատուցման նպատակով «SWECO International AB» (Շվեդիա) ընկերության հետ կնքված պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կատարելու համաձայնագիրը:
Հարցին դեմ քվեարկեց Նազելի Վարդանյանը հիմնավորելով, որ նպատակահարմար չէ, որ «SWECO International AB» ընկերությունն ինքն ընտրի կազմակերպություն և վերջինիս վճարի իր իսկ աշխատանքների տեխնիկական փորձաքննության համար:

Օրակարգի 6-րդ հարցի վերաբերյալ որոշվեց՝ հաստատել «Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ - Հայաստան» ՊՈԱԿ-ի Կառավարման խորհրդի կողմից ս.թ. մայիսի 15-ին հաստատված գնումների պլանի մեջ փոփոխությունները:

Օրակարգի 7-րդ հարցի վերաբերյալ որոշվեց՝ ընդունել ի գիտություն տեղեկատվությունը՝ «Գյուղական ճանապարհների վերականգնում» ենթածրագրի առաջին փաթեթում ընդգրկված ճանապարհների երթևեկելի մասերի լայնության փոփոխության վերաբերյալ «Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ - Հայաստան» ՊՈԱԿ-ի Կառավարման խորհրդի ս.թ. հունիսի 26-ի նիստի արձանագրության 7-րդ կետի ա/ ենթակետում նշված հանձնարարության կատարման մասին:

Օրակարգի 8-րդ կետի.

«ա» ենթակետի վերաբերյալ որոշվեց՝ բողոքը համարել անհիմն և հաստատել Հազարամյակի մարտահրավեր հիմնադրամ - Հայաստան ծրագրի «Բնապահպանական և սոցիալական գնահատում և վերահսկողություն» խորհրդատվական ծառայությունների ձեռք բերման մրցույթի գնահատման արդյունքների բողոքարկման պատասխանը:

«բ» ենթակետի վերաբերյալ որոշվեց՝ հաստատել Հազարամյակի մարտահրավեր հիմնադրամ - Հայաստան ծրագրի «Ֆինանսական գործակալի» խորհրդատվական ծառայությունների ձեռքբերման տեխնիկական առաջարկների գնահատման արդյունքները:

«գ» ենթակետի վերաբերյալ որոշվեց՝ հաստատել Հազարամյակի մարտահրավեր հիմնադրամ - Հայաստան ծրագրի Աուդիտի անցկացման առաջարկի ներկայացման հայտը:

«դ» ենթակետի վերաբերյալ որոշվեց՝ հաստատել Հազարամյակի մարտահրավեր հիմնադրամ - Հայաստան ծրագրի ֆինանսական հաշվետվողականության պլանում փոփոխությունները:

«ե» ենթակետի վերաբերյալ որոշվեց՝ հաստատել «Հազարամյակի մարտահրավեր - Հայաստան» հիմնադրամի «Գյուղական ճանապարհների վերականգնում» ենթածրագրի «Կատարման վրա հիմնված ավտոճանապարհների ընթացիկ և ձմեռային պահպանման գործող համակարգի վերանայում և բարելավում» խորհրդատվական ծառայությունների ձեռք բերման մրցույթի պայմանագրի նախագիծը:

Օրակարգի հարցերի սպառումից հետո նիստն ավարտվեց:

«ՀԱՁԱՐԱՄՅԱԿԻ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐ» ՀԻՄՆԱԴՐԱՄ-ՀԱՅԱՍՏԱՆ»
ՊՈԱԿ-Ի ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ, ՍԵՐԺ ՍԱՐԳՍՅԱՆ
ՀՀ ՎԱՐՉԱՊԵՏ

Նիստը արձանագրեց՝
«ՀՄՀ-Հայաստան» ՊՈԱԿ-ի գնումների ղեկավար
Ռ. Պետրոսյանը